ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 21» դեկտեմբերի 2018 թ. N 358-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻԿ ԳՐԻՇԱՅԻ ԱՎԱԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 226-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2009 թվականի օգոստոսի 21-ի՝ «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու, հանրակրթական առարկաների դասագրքեր հրատարակելու և հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաձողովների ձևավորման կարգը հաստատելու մասին>> N752-Ն հրամանով հաստատված հավելվածի 12-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները և «Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ»-ի գործադիր տնօրենի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 225-12/18 գրությունը.

կարգադրում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսիկ Գրիշայի Ավագյանի նկատմամբ աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար կիրառել կարգապահական տույժ՝ «Նկատողություն»:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ